ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԱՐՎԵՍՏ

# ՊՐՈՖԵՍՈՐ ՎԻՏԱԼԻ ՔԱՄԱԼՈՎԻ ՀԱՄԵՐԳԸ



*Դաշնամուրի նվագակցությամբ կամերային երաժշտության ժանրը, որոշակիորեն կողմնորոշված է դեպի նախապատրաստած ունկնդիրների սահմանափակ լսարանը: Համերգի հաջողությունը պայմանավորված է ոչ միայն մենակատարի տաղանդով, այլեւ կոնցերտմայստերի վարպետությամբ: Ի տարբերություն օպերային-սիմֆոնիկ ժանրի, ուր կարեւորագույն դեր է հատկացվում նվագախմբին, կամերային երաժշտության մեջ այդ դերը հատկացվում է դաշնամուրին, որն ընդգծում է երաժշտական երկի դրամատուրգիան ու կուլմինացիոն պահերը...*

Թբիլիսիի պետական կոնսերվատորիայի պրոֆեսոր, դաշնակահար Վիտալի Քամալովն արդեն երկար տարիներ ազնվորեն ու բարեխղճորեն ուսանողներին փոխանցում է դաշնամուրի վրա նվագակցելու խիստ բարդ արվեստի իր ունակությունը: Օգնել մենակատարին նուրբ լիրիկական էմոցիաներ հաղորդելու, ընդսմին դրսեւորելով բարձր երաժշտական եւ ընդհանուր կուլտուրա, այս ամենը, ինչպես խոստովանում են երաժշտագետի ուսանողները՝ ճանաչված մենակատարները, Վ.Քամալովը մեծագույն հաջողությամբ սերմանում է նրանց մեջ:

Թբիլիսիի կոնսերվատորիայի մեծ թվով շրջանավարտներ, որ նրանից սովորել են այդ հմտությունները, աշխատում են հեղինակավոր երաժշտական թատրոններում, ֆիլհարմոնիկ բեմերում: Ինքը՝ Վիտալի Քամալովը, նույնպես Թբիլիսիի կոնսերվատորիայի շրջանավարտ է, այստեղ էլ ավարտել է կոնսերվատորիան: Հայրը՝ Գրիգորին, ուներ վաստակավոր երկաթուղայինի կոչում, պատասխանատու պաշտոններ է վարել Անդրկովկասյան երկաթուղու վարչությունում եւ օպերայի ու բալետի կրքոտ երկրպագու էր, անգիր գիտեր մեծ թվով մեներգեր եւ նույնիսկ մտերիմ էր շատ աստղերի հետ: Նրանց թվում էին Դավիթ Անդղուլաձեն, Վախթանգ Ճաբուկիանին, Բաթու Կրավեիշվիլին... Մայրը՝ Վարվառա Կոնստանտինի Առաքելովան, թեեւ ինժեներ-շինարար էր եւ աշխատում էր նախագծային կազմակերպությունում, նույնպես հաղորդակից էր երաժշտությանը, քանի որ ժամանակին երաժշտական ուսումնարան էր ավարտել: Ուստի զարմանալի չէ, որ այդպիսի ընտանիքի երեխաները դարձան պրոֆեսիոնալ երաժիշտներ: Վիտալիի եղբայրը՝ Էրվին Քամալովը, արդեն երկար տարիներ Աստրախանի կոնսերվատորիայում դաշնամուրի ամբիոնի պրոֆեսոր է:

Վերջերս երաժշտասեր հասարակայնությունը վառ տպավորություն ստացավ կոնսերվատորիայի Փոքր դահլիճում կայացած համերգից, որտեղ Վիտալի Քամալովը նվագակցում էր ճանաչված երգչուհի Սվետլանա Տատոեւային ու նրա հիանալի գործընկեր Գիա Գաբելաիային: Նորանոր հաջողություններ ենք մաղթում այդ ստեղծագործական համագործակցությանը:

*ԱՐՏԵՄ ԿԻՐԱԿՈԶՈՎ*

ՀԱՄԱՅՆՔ

# «ՍՈՒՐԲ ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑԻ» ՆԱԽԱԿՐԹԱՐԱՆԻ ՍԱՆԵՐԻ ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍԸ

*«Հայարտուն» մշակույթի կենտրոնիում կայացավ Սուրբ Մովսես Խորենացու անվան նախակրթարանի ավագ խմբի սաների ավարտական ցերեկույթը: Գեղեցիկ զարդարված դահլիճում տեղեր էին զբաղեցրել հոգեւոր հայրերը, ուսուցիչներ, ծնողներ, հյուրեր, թբիլիսահայ հասարակայնության ներկայացուցիչներ:*



Վահագն եւ Լուսինե Աֆյանների բարերարությամբ ձեռք բերված գեղեցիկ համազգեստներով զուգված փոքրիկները «Տերունական աղոթքի» փայլուն արտասանությամբ բացեցին հանդեսը եւ, Վիրահայոց թեմի առաջնորդ Տեր Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանի օրհնությունը ստանալուց հետո, ցուցադրեցին իրենց սովորածը: Փոքրիկները ներկաներին ողջունեցին եւ ողջ հանդեսը վարեցին իրենք՝ շրջանավարտները, ում շուրթերից հնչած Այբ-Բեն-Գիմը, գեղեցիկ արտասանությունն ու երգը, խրոխտ պարը վեր էր սպասվածից:

Նախակրթարանի 16 շրջանավարտներից տասը նոր ուսումնական տարին սկսելու են հայկական դպրոցներում: Վրաստանում ՀՀ դեսպանորդ Վահագն Աֆյանն ու Թբիլիսիի թիվ 104 հայկական դպրոցի տնօրեն տիկին Իրինա Ժամկոչյանը արժեւորեցին սաների պատրաստվածության մակարդակը եւ նախակրթարանի կրթության բաժնի պատասխանատու ու տնօրեն Եվգենյա Մարկոսյանի, դաստիարակչուհիներ Լալա Գեւորգյանի, Նարինե Ղուչչյանի, հոգեւոր տեսուչ Գեւորգ սարկավագ Անտոնյանի ներդրումը՝ լավ սովորելու, իսկական հայ մեծանալու ամուր հիմք եւ մեծ կարողություն ստեղծելու գործում:

# ՏՈԼՄԱՅԻ... ՓԱՌԱՏՈՆ



*Հունիսի 30-ին, Վիրահայոց թեմի Թբիլիսիի Սուրբ Էջմիածին եկեղեցու բակում, կայացավ հայ ազգային կերակրատեսակի՝ «Տոլմա-2013» փառատոն-մրցույթը:*

Այն նախաձեռնել էր Վրաստանի հայ կանանց «Շուշանիկ» միությունը (նախագահ՝ Ս.Խաչատրյան) «Հայարտուն» կենտրոնի (ղեկավար՝ Լ.Չիդիլյան) աջակցությամբ եւ Վիրահայոց թեմի հովանավորությամբ: Ախորժալի տոլմայի բուրմունքը տարածվել էր ողջ Հավլաբար թաղամասում: Սեղաններին տեղ էին գտել հայ կանանց կողմից տանը պատրաստված տոլմայի շուրջ 15 տարատեսակներ: Փառատոն-մրցույթի նպատակն է ազգային կերակրատեսակների ժողովրդականացումը եւ տարածումը:

Մեր ընթերցողին հիշեցնենք նաեւ, որ 2013 թվականը Վիրահայոց թեմում նշանավորվեց Սուրբ Ծննդյան տոնի կապակցությամբ հայկական գաթայի փառատոնով, իսկ կիսամյակն ավարտվեց ազգային տոլմայի փառատոն-մրցույթով:

ԼՐԱԳՐՈՂԻ ՆՈԹԵՐԻՑ

# ԱՂԱՍԻ ՄԵԼՔՈՆՅԱՆ՝ ՄԵԾԱՏԱՌՈՎ ՄԱՐԴԸ ԵՎ ԼՐԱԳՐՈՂԸ

(Սկիզբը՝ 4-րդ էջում)

Մելքոնյան ամուսինների համեստությունը, հյուրասիրությունը, ընկերասիրությունը եւ դրական շատ այլ հատկանիշներ ծնողական գեների միջոցով փոխանցվել են նաեւ նրանց որդիներին: Իզուր չի ասված՝ «Պտուղը ծառից հեռու չի ընկնում»: Առանձնակի հարգանքով ու սիրով եմ հիշում ավագ որդուն՝ Կարապետին, որն Ախալքալաքիում, իր ընկերների շրջանում, մեծ հարգանք ու պատիվ այսօր էլ է վայելում: Կրելով ծնողների գեները՝ հիանալի եւ օրինակելի ընտանիք է կազմել նաեւ դուստրը՝ Սուսանը:

Լավ եմ հիշում նաեւ կրտսեր որդուն՝ այն ժամանակ դպրոցական Աշոտին: Շատ աշխույժ ու խելացի տղա էր նա, ընկերների շրջանում ամենաակտիվներից մեկը: Կասեմ, որ հայրը շատ էր հպարտանում Աշոտով:

- Աշոտիկս շատ խելացի է, Սերգե՛յ,- հաճախ էր ասում նա: Ա՜յ, կտեսնես, կգա ժամանակը եւ ճանաչված մարդ կդառնա: Դպրոցը դեռ չի ավարտել, սակայն արդեն խորապես է ուսումնասիրել հայոց պատմությունը: Ուղղակի զարմանում եմ՝ ինչպես է հասցնում ե՛ւ դասերը պատրաստել, ե՛ւ լրացուցիչ գրականություն կարդալ...

Մի անգամ հեռուստացույցով դիտում էի «Հայլուրի» հաղորդումները Երեւանից: Երկնագույն էկրանից հայտնեցին, որ հաղորդումը նվիրվում է Հայաստանի պատմության ինստիտուտի հիմնադրման 50-ամյակին, եւ խոսքը տրվում է նրա տնօրենին՝ պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Աշոտ Աղասիի Մելքոնյանին: Մի պահ ականջներիս չհավատացի, լարեցի տեսողությունս ու լսողությունս: Աչքերիս առջեւ հառնեց Աղասի Հարությունովիչը՝ իր բարի դեմքով ու մեղմ ժպիտով, եւ հիշեցի նրա՝ «Կտեսնես, Աշոտիկս ճանաչված գիտնական կդառնա...» խոսքերը: Մի քանի վայրկյան անց, ամբիոն բարձրացավ լայնաթիկունք, առնականացած դեմքով ու փայլող աչքերով Աշոտ Մելքոնյանը:

«Մարդը իր հոգու ջերմությունն առանց տատանվելու պետք է տա իրեն շրջապատողներին եւ օժտված լինի կարեկից լինելու հատկանիշներով»,- հաճախ էր կրկնում Աղասի Հարությունովիչը:

...Անցյալ դարի 70-ական թվականների վերջերին Ախալքալաքիում հերթական կամպանիա ծավալվեց հանրապետությունում կարգուկանոն հաստատելու համար: Յուրաքանչյուրը ձգտում էր ստվերում պահել իր սեւ գործունեությունը, պահպանել զբաղեցրած պաշտոնը...

... Աղասի Հարությունովիչի առանձնասենյակում նստած՝ զրուցում էինք մեր անելիքների շուրջ, երբ հանկարծ դուռը դանդաղ բացվեց ու ներս մտավ Վաչիանի սովխոզի երիտասարդ տնօրեն Մկրտիչ Ղարիբյանը: Նա լուռ նստեց բազկաթոռին եւ վախվորած հայացք գցեց մեզ վրա:

- Ի՞նչ կա, հարգելիս, ի՞նչ ցավ ունես, ասա, մի քաշվիր, ես լավ գիտեմ քո բուռն բնավորությունը, ինչո՞ւ ես ձկան նման բերանդ ջուր առել,- ժպտադեմ դիմեց գործընկերս:

- Ընկեր Մելքոնյան, հենց էդ անտեր ձկան համար էլ եկել եմ, ինքս ինձ կրակն եմ գցել...

- Պարզ ասա, սիրելիս, որ բան հասկանամ,- լրջորեն կտրեց նա:

- Ի՞նչ ասեմ, դուք ինքներդ լավ գիտեք, թե ինչ պայքար է սկսվել շրջանում... Ես էլ, առանց մտածելու, ինչ-որ տեղ արտասանեցի Խնկո-Ապոր առակներից մեկը: Տղաներից մեկն էլ, ստոր եւ թունոտ մտադրությամբ, առակի բովանդակությունն ու իմաստը խեղաթյուրելով, հասցրել է նոր քարտուղարին: Նա էլ զայրացել եւ խեթ-խեթ է նայում վրաս...

- Ո՞ր առակը, մի նորից արտասանիր,- մեղմ ժպտալով՝ ասաց Աղասի Հարությունովիչը եւ շարունակեց,- թող Սերգեյն էլ լսի եւ, եթե հարկ լինի, երկուսով կդիմենք Ալեքսանդր Օգանեզովիչին, նա քինախնդիր չէ, կների:

- Ի՞նչ կարիք կա, հարգելիս, դե՛, առակ է, էլի:

- Մինչեւ չարտասանես, ցանկությունդ չենք կատարի:

- Դե՛, որ այդպես է, ի՜նչ արած, նեղն եմ՝ կհպատակվեմ:- Նա թեթեւակի հազաց ու սկսեց.

*«Չկնիկ լող տուր, լող արա,*
*Դրսի որսը թող արա,*
*Իջիր ջրի հատակը,*
*Մինչեւ անցնի վտանգը:*
*Տես, փորձանք կա քո գլխին...»:*

Աղասին այլեւս չկարողացավ զսպել իրեն եւ փառ-փառ ծիծաղեց:

Մկրտիչը լռեց եւ ժպտալով դիմեց մեզ.

- Ի՞նչ վատ բան կա այս տողերում, որ ընկեր Մովսիսյանին դուր չի եկել...

Զյունափայլ թաշկինակով սրբելով շուրթերը՝ Մելքոնյանն ասաց.

- Հանգիստ գնա գործիդ, Մկրտի՛չ, մենք քարտուղարին կմխիթարենք...

...Տարիներ անց, կարտոֆիլի մթերման ընթացքը լուսաբանելու համար, գործուղվեցի Ախալքալաքիի շրջան: Քաղաքի կենտրոնում գտնվող «Խաս» կոչվող այգում նորից հանդիպեցինք Մկրտիչ Ղարիբյանին: Նրա տրամադրությունը այս անգամ բարձր էր:

- Էդ ո՞ւր, հարգելիս,- դիմեց Աղասի Հարությունովիչը:

- Կասեմ միայն այն դեպքում, եթե հյուրիդ հետ միասին գնանք մի կտոր հաց ուտենք:

Շնորհակալություն հայտնելով եւ մերժելով առաջարկը՝ շրջվեցինք ու շարունակեցինք մեր ճանապարհը:

- Սպասեք, ընկեր Մելքոնյան, Ձեզ մոտ էի գալիս, խորհրդակցելու բան ունեմ, գիտեք չէ՞, որ կան հարցեր, որոնք առանց Ձեզ չեմ լուծում:

- Հետաքրքիր է,- ասաց Մելքոնյանը,- դե՛, ասա, տեսնեմ՝ ի՞նչ կա:

- Որոշել եմ տղաներին, որպես նվեր, մի հինգ-վեց տոննա կարտոֆիլ ուղարկել, ի՞նչ կասեք:

- Ո՞ր տղաներին,- զարմացած հարցրեց Աղասի Հարությունովիչը:

- Արարատցիներին, էլ ո՞ւմ, բա նրանց միության չեմպիոն դառնալն ու գավաթ շահելը մենք աչքաթո՞ղ պետք է անենք:

- Խելացի որոշում է, Մկրտիչ ջան, ապրես, միայն ասա, առաջադրանքներդ կատարե՞լ ես:

- Համարյա կրկնակի,- հպարտ պատասխանեց տնտեսության տնօրենը:

- Իսկ ի՞նչն է խանգարում, դե՛, մի ձգձգիր, գործի անցիր:

- Առանց քարտուղարի իմանալո՞ւ...

- Անհոգ կաց, նա մեծ ֆուտբոլասեր է, նաեւ՝ «Արարատի» երկրպագուն, հենց հիմա միասին գնանք մոտը...

Հաջորդ օրը «Կամազը», բեռնված Ախալքալաքիի լավորակ ու համեղ կարտոֆիլով, բռնեց Երեւանի ճանապարհը:

...Մարդամոտ, հյուրասեր, վերին աստիճանի կուլտուրական ու գրագետ Աղասի Մելքոնյանը բազմաթիվ բարեկամներ ու ընկերներ ուներ մեր երկրամասում, Թբիլիսիում, Երեւանում... Բազմիցս եմ հանդիպել նրա պատանեկության ընկերների՝ շրջանի գլխավոր դատախազ Իսակ Աբրահամյանի, Թբիլիսիի օդանավակայանի պատասխանատու ղեկավար, ծնունդով ախալքալաքցի Լավրենտի Մկրտչյանի, տնտեսագետ Ժորա Մելքոնյանի, Բուռնաշեթի կոլտնտեսության նախագահ, հետագայում Բոգդանովկայի (Նինոծմինդա) կուսշրջկոմի առաջին քարտուղար Վասիլ Քոչոյանի, Ախալքալաքիի կուսշրջկոմի քարտուղար Թամարա Ալելիշվիլու... շատ ու շատ հողագործների, անասնապահների, հիմնարկ-ձեռնարկությունների աշխատողների հետ, որոնցից յուրաքանչյուրը սերտ կապերի մեջ էր նրա հետ եւ միասին էին կիսում Մելքոնյանների գերդաստանի ուրախությունն ու ցավը:

Աստծուց խնդրում եմ, թող լուսավոր լինի նրա հոգին, թող օրհնյալ հողը թեթեւ լինի քեզ վրա, իմ ուսուցիչ, ընկեր ու բարեկամ Աղասի Մելքոնյան...

*ՍԵՐԳԵՅ ԱՌԱՔԵԼՅԱՆ*
*Վրաստանի վաստակավոր ժուռնալիստ*

Ð²ðò – ä²î²êÊ²Ü ✵ ²ÚÈ²¼²Ü ✵ ÊàðÐàôð¸Üºð

ÐàôÈÆêÆ 6-Àª Ð²Ø´àôÚðÆ ØÆæ²¼¶²ÚÆÜ úð

## ՀԱՄԲՈՒՅՐՆ ԱՎԵԼԱՑՆՈՒՄ Է ԶԱՐԿԵՐԱԿԻ ՀԱՃԱԽԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ



*Բրիտանացիների նախաձեռնությամբ, հուլիսի 6-ն ընդունվել է որպես Համբույրի միջազգային օր, իսկ մոտ 20 տարի առաջ այն հաստատվել է նաեւ ՄԱԿ-ի կողմից: Աշխարհում առաջին համբույրի հեղինակային իրավունքն առ այսօր անհայտ է մարդկությանը: Բնական է, որ այն չի հայտնագործվել ինչպես էլեկտրականությունը կամ հեռախոսը ու անվանվել իր գյուտարարի անունով:*

Աշխարհի տարբեր քաղաքներում այս օրը համբուրվելու մրցույթներ են կազմակերպվում, որոնց մասնակիցները ջանք չեն խնայում նորանոր ռեկորդներ սահմանելու համար:

Ամենագեղեցիկ լեգենդներից մեկի համաձայն, հնում մարդիկ, ովքեր հնարել են համբույրը, հավատում էին, որ շնչառությունը հոգի ունի: Հենց այդ պատճառով էլ համբուրվող զույգի շնչառությունների միացումն ընկալվում էր որպես հոգիների ինքնատիպ միասնություն:

Ինչպես պնդում են գիտնական-ֆիլեմատոլոգները, համբույրը ոչ միայն հաճելի է, այլեւ` օգտակար: Մարդու շուրթերը հարյուր անգամ ավելի զգայուն են, քան մատների ծայրերը: Իսկական համբույրն ավելացնում է զարկերակի հաճախականությունը` րոպեում մինչեւ 100 զարկ եւ ավելի, իսկ ուղեղում առաջացնում է նույն քիմիական ռեակցիաները, ինչ օդապարիկից թռիչքի կամ ատրճանակից կրակելու ժամանակ: Անգլիացի եւ գերմանացի հոգեբանները նաեւ հատուկ հետազոտություն են անցկացրել եւ եկել այն եզրակացության, որ համբույրը կարող է պատկերացում տալ մարդու եւ նույնիսկ նրա ապագայի մասին:

ÎÚ²ÜøÜª ÆÜâäÆêÆÜ Î²

## ԱՎԵԼԱՆՈՒՄ Է ՄԱՐԴՈՒ ԿՅԱՆՔԻ ՄԻՋԻՆ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ



*Մարդու կյանքի միջին տեւողությունը տարեցտարի ավելանում է, եւ ոչ մի հիմք չկա ենթադրել, որ այդ միտումն ապագայում կփոխվի: Այս եզրակացությունն է բովանդակում Առողջապահության համաշխարհային կազմակերպության (ԱՀԿ)` Ժնեւում հրապարակված ամենամյա զեկույցը:*

«1990-ից 2011 թվականն ընկած ժամանակաշրջանում այս ցուցանիշն ավելացել է գրեթե տասը տարով եւ շարունակում է աճել»,- ընդգծել է ԱՀԿ-ի ներկայացուցիչ Քոլին Մաթերսը: Ընդ որում, նրա խոսքով, դա վերաբերում է նաեւ այն երկրներին, որտեղ ավանդաբար բնակվում են մեծ թվով երկարակյացներ:

ԱՀԿ-ի փաստաթղթում նշվում է, որ մեր մոլորակի վրա մարդու կյանքի տեւողությունը 20-րդ դարի յուրաքանչյուր տասը տարվա ընթացքում ավելացել է 2-2,5 տարով:

Այդուհանդերձ, դեռեւս բանավեճերի առարկա է մնում այն հարցը, թե ինչպես կզարգանան իրադարձությունները 21-րդ դարում, դրա շուրջ մասնագետները չեն կարողանում միասնական կարծիքի գալ:

«Բացառված չէ, որ ապագայում ի հայտ կգան է'լ ավելի շատ գործոններ, որոնք բացասաբար են ազդում կյանքի տեւողության վրա, այդ թվում` ճարպակալումը, որն ավելի ու ավելի է տարածվում զարգացած երկրներում: Ռազմական հակամարտությունները, շրջակա միջավայրի աղտոտումը եւ գլոբալ տաքացումը նույնպես կարող են բացասական ազդեցություն ունենալ»,- նշել է Մաթերսը: Նրա խոսքով, դրան կարելի է հակադրել բժշկության բնագավառի, օրինակ` գենային ինժեներիայի ոլորտի նոր մեթոդիկաներ:

ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ

## ՍԱՌՆԱՐԱՆԸ ՊԵՏՔ Է ՀԱԼԵՑՆԵԼ



Սառնարանը պարբերաբար հալեցնելը դրա ճիշտ եւ երկարատեւ շահագործման անհրաժեշտ պայմանն է: Հալեցման ժամանակ չի կարելի արմատական գործողությունների դիմել, օրինակ, պատերից սառույցը պինդ առարկաների օգնությամբ պոկելը: Սառցախցիկի ներսում սառցե «մուշտակի» դանդաղ հալեցումը տանտիրուհուց որոշակի համբերություն է պահանջում: Սակայն այդ գործընթացը կարելի է նշանակալիորեն արագացնել, եթե սառցախցիկի ներսում տաք ջրով ջերմակ (գրելկա) դնել: Եվ, հակառակը, սառնարանի չնախատեսված հալեցումը (օրինակ, երբ երկար ժամանակով հոսանքն անջատվում է) կարելի է երկարաձգել: Դրա համար հարկավոր է ընդամենը ճիշտ ժամանակին սառցախցիկում մի կտոր մետաղ դնել:

Եվս մի օգտակար խորհուրդ. սառնարանի պատերին առատորեն սառցի շերտի գոյացումը կարելի է կանխել, եթե, հերթական հալեցումից հետո, հետեւի պատը շփեք գլիցերինով:

ՀԻԳԻԵՆԱ

## ՀՈՏԵՐ. ԵՐԲ ԿՈՐՉՈՒՄ Է ՀՈՏԱՌՈՒԹՅՈՒՆԸ



(Սկիզբը` նախորդ համարում)

Հոտառության նվազումի կամ կորստի պատճառ կարող է լինել ոչ միայն տարիքը: Հոտերն զգալու եւ տարբերելու ընդունակությունը նվազեցնել կարող են նաեւ հետեւյալ գործոնները.

- քթի կամ քթի խոռոչների հիվանդությունները (ալերգիա, սինուսիտ, պոլիպ (ուռուցք` քթի լորձաթաղանթի վրա),
- որոշ դեղամիջոցների ընդունումը, ներառյալ` սիրտ-անոթային դեղորայքը,
- կարիեսը կամ ատամների վատ հիգիենան,
- վիրուսային վարակները (օրինակ, վիրուսային հեպատիտը),
- B2, B12, PP վիտամինների եւ ցինկի պակասը,
- լյարդի հիվանդությունները,
- սկլերոզը, ուռուցքները եւ այլն:
- մի շարք էնդոկրինային հիվանդություններ,
- Ալցհեյմերի եւ Փարքինսոնի հիվանդությունները, ընկնավորությունը,
- գանգուղեղային վնասվածքները:

Հոտառության իսկական պատճառը կարող է պարզել մասնագետը: Եթե նկատում եք, որ սկսել եք վատ տարբերել հոտերը, դիմեք բժշկի` թերապեւտի կամ քիթ-ականջ-կոկորդի մասնագետի (օտոլարինգոլոգ):

Շատ հիվանդություններ, օրինակ, ատամների կամ քթի խոռոչների, կարելի է բուժել, եւ այդ ժամանակ հոտառությունը կվերականգնվի:

Եթե հոտառության նվազեցման պատճառը ծխելն է, ապա խելամիտ կլինի վերջ տալ այդ վնասակար սովորությանը:

Պետք է նշել, որ հոտերն զգալու ընդունակության արագ կամ էական նվազումը կարող է լինել Ալցհեյմերի կամ Փարքինսոնի հիվանդության նշան, ուստի ժամանակին կլինիկա դիմելը կօգնի ախտորոշել հիվանդությունը զարգացման վաղ փուլում եւ անհապաղ սկսել բուժումը:

## ԻՆՉՊԵ՞Ս ԴԻՄԱՆԱԼ ՇՈԳԻՆ



* Գետում լողալ սիրողները պետք է հաշվի առնեն, որ ջրի մեջ անմիջապես սուզվել չի կարելի, ավելի ճիշտ է սկզբում ստվերում մնալը: Ջերմաստիճանի կտրուկ փոփոխությունները կարող են սրտի անոթների կծկումներ առաջացնել:

* Սառը ցնցուղի տակ մի կանգնեք: Անոթների կտրուկ սեղմվելը կարող են հանգեցնել նրան, որ հետո դրանք ավելի շատ լայնանան:

* Շոգին խորհուրդ չի տրվում գարեջուր խմել, քանի որ այն ջրազրկում է առաջացնում, թունդ սուրճը նույնպես ցանկալի չէ, քանի որ անոթներն առանց այդ էլ ծանրաբեռնված են, դե', իսկ ալկոհոլային կոկտեյլներ խմելիս` հիշեք սրտի մասին:

* Ոչ մի դեպքում շոգին չի կարելի սինթետիկ կամ կիպ հագուստ կրել:

* Բնականաբար, շոգին ավելի ճիշտ է դիմահարդարման միջոցներից, հատկապես քսուքներից, ստվերաներկերից եւ դիմափոշուց հրաժարվելը: Դրանք դժվարացնում են մաշկի շնչառությունը, ինչի պատճառով դեմքն ավելի է քրտնում, եւ կարող են բորբոքումներ առաջանալ:

## ԹԵՎԱՎՈՐ ՄՏՔԵՐ



Իմ ժողովրդի ազնվությունը, խիզախությունը, պարզությունը եւ ուշիմությունը հպարտություն են պատճառում ինձ: Այս բարեմասնությունները ճշմարիտ հայերի ժառանգությունն են: Նրանք են սնուցել իմ կյանքը, եւ ես երախտապարտ եմ դրա համար:

***ՎԻԼՅԱՄ ՍԱՐՈՅԱՆ***
***(1908-1981)***
***Հայ գրող***

Ագահությունը մարդուն կարող է կործանել:

***ՍՈՒԼԽԱՆ-ՍԱԲԱ ՕՐԲԵԼԻԱՆԻ***
***(1658-1724)***
***Վրաց գրող, առակագիր***

Համեստը նա չէ, ով անտարբեր է գովեստների նկատմամբ, այլ նա, ով ուշադիր է կշտամբանքների հանդեպ:

***ԺԱՆ ՊՈԼ***
***(1763-1825)***
***Գերմանացի գրող***

Այն երիտասարդը, որը երբեք չի արտասվել, վայրենի է, իսկ այն ծերունին, որը չի ծիծաղում` տխմար:

***ՍԵՐՎԱՆՏԵՍ***
***(1547-1616)***
***Իսպանացի գրող***

Աշխարհի բոլոր գանձերից ամենամեծը երիտասարդությունն է:

***ՀԵՆՐԻԿ ՍԵՆԿԵՎԻՉ***
***(1846-1916)***
***Լեհ գրող***

Մարդիկ հաճախ կարող են պարծենալ նույնիսկ ամենաեռանդուն կրքերով, բայց նախանձը` ամենավարանոտ եւ ամոթալի կիրքը, ոչ ոք չի համարձակվի խոստովանել:

***ԼԱՌՈՇՖՈՒԿՈ***
***(1613-1680)***
***Ֆրանսիացի գրող***

Հաջողության հասած յուրաքանչյուր տղամարդու թիկունքին կանգնած են գոհ կինը եւ զարմացած զոքանչը:

***ԱՐԱՅԻԿ ԱՎԱԳՅԱՆ***
***«Վրաստանի» ընթերցող***

²ÜºÎ¸àîÜºð

** - Ինչո՞ւ ամուսնացար այդ հիմար տղամարդու հետ:*

*- Հենց այդ պատճառով:*

** - Իսկ որտե՞ղ է ամուսինդ:*

*- Շան հետ գնաց զբոսնելու:*

*- Բայց շունն այստեղ է:*

*- Մոռացել է:*

** Բանկում աշխատանքային օրվա ավարտն է: Հավաքարարը մոտենում է բանկի կառավարչին.*

*- Դուք չէի՞ք կարող ինձ տալ պահեստարանի բանալիները:*

*- Դու ի՞նչ է, խելագարվե՞լ ես:*

*- Հասկանո՞ւմ եք, արդեն մատիս կոշտուկ է առաջացել կողպեքը մեխով բացելուց. բացի ինձնից, այդ ո՞վ պետք է այնտեղ հատակները լվանա:*

** - Երեկ ես գնացի նուդդիստների լողափ, եւ կզակս մինչեւ ծնկներս կախվեց:*

*- Ի՞նչ է, այդքան զարմացա՞ր:*

*- Ո'չ, այդպես ծածկվում էի:*

** Բարի գործը պետք է անել աննկատ, այնպես աննկատ, որ կարելի է նույնիսկ չանել:*

** Շիկահերը` ընկերուհուն.*

*- Ցանկանում եմ որդեգրել մեկամյա անգլիացի երեխայի:*

*- Եվ ի՞նչ ես անելու նրա հետ:*

*- Երբ սկսի խոսել, նրանից անգլերեն կսովորեմ:*

** - Ի՞նչ է եղել երեկ: Ինչպե՞ս հիշեմ, թե երեկ ինչ է եղել... Ինչպե՞ս հիշեմ... Այո'... հիշեցի, սատանան տանի... Ինչպե՞ս մոռանալ... Ինչպե՞ս մոռանալ...*

** Ոչնչով չեմ կարող Ձեզ ուրախացնել. ինձ մոտ ամեն ինչ լավ է:*

** Հանդիպում են նույն հիմնարկի երկու աշխատակից: Նրանցից մեկը մյուսին ասում է.*

*- Ես հենց նոր շեֆի մոտ էի, եւ երկու նորություն ունեմ: Մեկը լավն է, մյուսը` վատը: Որի՞ց սկսենք:*

*- Սկսիր վատից:*

*- Ինձ աշխատանքից հեռացրել են:*

*- Իսկ ո՞րն է լավը:*

*- Քեզ նույնպես հեռացրել են:*

** Որոշել են ջրացատկը դարձնել ձմեռային մարզաձեւ. գեղեցիկ է, դիտարժան, շունչդ կտրվում է, եւ բոլորովին էլ ջրի շիթ չի առաջանում:*

# ՀԱՅԱՍՏԱՆ - ԱՐՑԱԽ. Փաստեր, իրադարձություններ

«ՎՐԱՍՏԱՆԻ», ԱՐՄԵՆՊՐԵՍԻ, ՊԱՆԱՐՄԵՆԻԱՆԻ ԵՎ ԿԱՎԿԱԶՊՐԵՍԻ ՆՅՈՒԹԵՐՈՎ

## ՔՆՆԱՐԿՎԵԼ ԵՆ ԿԱՌՈՒՊՑԻԱՅԻ ՌԻՍԿԵՐԻ ՆՎԱԶԵՑՄԱՆ ՀԱՐՑԵՐԸ



*Հունիսի 29-ին, Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանի մոտ, տեղի է ունեցել քննարկում բյուջետային միջոցների արդյունավետ կառավարման, իրականացվող պետական ծրագրերի հանդեպ վերահսկողության ուժեղացման եւ կոռուպցիոն ռիսկերի նվազեցմանը միտված հարցերի շուրջ:*

Հանդիպմանը մասնակցել են ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանը, փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարար Արմեն Գեւորգյանը, ազգային անվտանգության խորհրդի քարտուղար Արթուր Բաղդասարյանը, Նախագահի աշխատակազմի ղեկավար Վիգեն Սարգսյանը, գլխավոր դատախազ Աղվան Հովսեփյանը, ազգային անվտանգության ծառայության տնօրեն Գորիկ Հակոբյանը, ոստիկանապետ Վլադիմիր Գասպարյանը, պաշտոնական այլ անձինք:

Նախագահի բացման խոսքից հետո, վարչապետը, գլխավոր դատախազը եւ ՎՊ նախագահը ներկայացրել են Աժում ՎՊ-ի հաշվետվության մեջ ներկայացված ուսումնասիրությունների արդյունքների, քննարկվող խնդիրների վերաբերյալ իրենց տեսակետը, գնահատականներն ու առկա խնդիրների լուծման ուղղությամբ ձեռնարկվող միջոցառումները:

## ԻՐԱՎՈՒՆՔԻ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՀԱՄԱԵՎՐՈՊԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎ ԵՐԵՎԱՆՈՒՄ



*Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեում, Հայաստանի նախագահության շրջանակում, հուլիսի 3-4-ը Ազգային ժողովում անցկացվեց «Իրավունքի գերակայության եվրոպական չափորոշիչները եւ իշխանությունների հայեցողության սահմանները ԵԽ անդամ երկրներում» համաեվրոպական խորհրդաժողովը:*

Խորհրդաժողովին մասնակցեց 32 երկրների եւ միջազգային կառույցների շուրջ 80 ներկայացուցիչ: Այս առիթով, Երեւանում էր նաեւ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախագահ Դին Շպիլմանը, ով ընդգծեց խորհրդաժողովի կարեւորությունը եւ նման հավաքների ավանդույթի շարունակության հույս հայտնեց: «Այս խորհրդաժողովը շատ կարեւոր է նաեւ այն առումով, որ այն անցկացվում է Հայաստանի նախագահության շրջանակներում: Նախագահության ընթացքում Հայաստանն արդեն իսկ առաջին ձեռքբերումն է ունեցել՝ ստորագրելով 15-րդ արձանագրությունը»,- ասաց Շպիլմանը:

«Հայաստանի համար երկրորդ ձեռքբերում կարող է լինել Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 16-րդ արձանագրության վերջնականացումը, որը նոր կարեւորություն կտա մարդու իրավունքների դատարաններին»,- ասաց ՄԻԵԴ-ի նախագահը:

Հայաստանը Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի նախագահությունը ստանձնել է մայիսի 16-ին Եվրոպայի խորհրդի անդամ երկրների արտաքին գործերի նախարարների 123-րդ նիստի ընթացքում:

## ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ՝ ՊԵՏՄԻՋՈՑՆԵՐԻ ԾԱԽՍՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ

*Հայաստանի վարչապետ Տիգրան Սարգսյանի գլխավորությամբ կառավարության հերթական նիստում, վարչապետն անդրադարձել է Հայաստանի պետբյուջեի միջոցների արդյունավետ օգտագործմանը:*

Հայաստանի կառավարությունը հաստատել է Հայաստանի 2014-2016 թթ. պետական միջնաժամկետ ծախսերի ծրագիրը, որի նպատակը պետական ծախսերի կառավարման համակարգի արդյունավետության բարձրացումն է: Ծրագիրը կծառայի Հայաստանի 2014թ. պետբյուջեի նախագծի մշակման հիմք, ինչպես նաեւ պետական կառավարման մարմինների եւ հանրության համար ընկալելի կդարձնի կառավարության առաջիկա երեք տարվա հարկաբյուջետային քաղաքականության գերակայությունները եւ ծախսային քաղաքականության ռազմավարությունը:

## ԱԿՆԿԱԼՎՈՒՄ Է ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃ



*Հայաստանի 2014-2016 թվականների պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրով նշված ժամանակահատվածում իրական ՀՆԱ-ի տարեկան աճը կանխատեսվել է համապատասխանաբար՝ 6,3; 6,3 եւ 6,4 տոկոսի չափով: Այդ մասին նշված է միջնաժամկետ ծախսերի ծրագրի նախագծում, որը կքննարկվի գործադիրի հուլիսի 4-ի նիստում:*

Ակնկալվում է նաեւ, որ պետական ծախսերի միջնաժամկետ ծրագրով կբարելավվի մակրոտնտեսական հաշվեկշռվածությունը՝ ի հաշիվ ռեսուրսների իրատեսական ու համապարփակ փաթեթի ձեւավորման, եւ ծրագիրը կնպաստի պետական ֆինանսական միջոցների հաշվին կատարվող բյուջետային հատկացումների միջոլորտային ու ներոլորտային արդյունավետ վերաբաշխմանը՝ ըստ գերակա ուղղությունների: Ծրագրով, ըստ ոլորտների, կսահմանվեն կոշտ բյուջետային սահմանափակումներ՝ ճյուղային նախարարությունների (գերատեսչությունների) համար պայմաններ եւ խթաններ ստեղծելով հասանելի միջոցների նպատակային ու արդյունավետ օգտագործման համար, կբարելավվի բյուջետային ծրագրերի գնահատման համակարգը եւ կմեծացվի պետական ֆինանսների կառավարման թափանցիկության աստիճանը:

Կառավարության 2013թ. ծրագրով ակնկալվում է ընթացիկ տարում ապահովել 6,3 տոկոս տնտեսական աճ:

## ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ԵՐԿԿՈՂՄ ՓՈԽԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԻՆ



*Հայաստանի վարչապետ Տիգրան Սարգսյանն ընդունել է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախագահ Դին Շպիլմանին: Հանդիպմանը Հայաստանի կառավարության ղեկավարը հույս է հայտնել, որ սույն այցը կնպաստի երկկողմ փոխգործակցության հետագա զարգացմանը:*

Տիգրան Սարգսյանը տեղեկացրել է, որ Հայաստանն ունի բարեփոխումների մեծ օրակարգ: Վարչապետը փաստել է, որ քաղաքացիական հասարակության կայացման գործում առկա են շոշափելի արդյունքներ, ինչն արձանագրել է նաեւ ընդդիմությունը: Իր հերթին, Դին Շպիլմանը եւս կարեւորել է Հայաստանի հետ երկխոսության զարգացումը եւ հույս հայտնել, որ իր պաշտոնավարման ընթացքում այն կստանա որակական նոր մակարդակ:

Այնուհետեւ, զրուցակիցները քննարկել են մարդու իրավունքների պաշտպանության ամուր հիմքերի ստեղծմանը, արդարադատության ոլորտին, ինչպես նաեւ ՄԻԵԴ-ի կողմից քննվող տարբեր գործերին առնչվող հարցեր:

## ԱՎԱՐՏՎԵՑ «ԱՐԻ ՏՈՒՆ» ԾՐԱԳՐԻ ԱՌԱՋԻՆ ՓՈՒԼԸ



*Աղավնաձորում հունիսի 28-ին տեղի ունեցավ «Արի տուն-2013» ծրագրի առաջին փուլի փակման հանդիսավոր արարողությունը:*

Միջոցառմանը ներկա էին Հայաստանի Սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանը, Հայաստանի վաստակավոր արտիստ, երգահան Արա Գեւորգյանը, գրող, հասարակական-քաղաքական գործիչ Լիլիթ Գալստյանը:

Արիտունցիները ներկաներին ողջունել են ասմունքով, երգով ու պարով, իսկ վիրահայ Մարինա Շահդինարովայի կատարմամբ «Կռունկ» երգը զարմացրել ու հուզել է ներկաներին:

Արիտունցիներին հայրենասիրական երգերով ոգեւորել են «Հայկազունք» խմբի երգիչները, որոնց կատարումներին միացան նաեւ ծրագրի մասնակիցներն ու հյուրերը:

«Արի տուն» ծրագրի 2013թ. առաջին փուլին մասնակցել է շուրջ 90 երիտասարդ՝ աշխարհի 10 երկրից:

### ՀՈՒԼԻՍԻ 5-Ը ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՆՇԱՆՆԵՐԻ ՕՐՆ Է

*Հայաստանի կառավարությունը հուլիսի 5-ը՝ երկրի Սահմանադրության օրը, սահմանեց պետական խորհրդանշանների օր: Սահմանադրության օրվա հետ մեկտեղ, հուլիսի 5-ին Հայաստանի պետական խորհրդանշանների օրը նշվեց տոնական քայլերթով եւ համերգային ծրագրով: Դրոշներով երթին մասնակցեցին պատանիներ եւ երիտասարդներ՝ մարզերից ու մայրաքաղաքի բոլոր վարչական շրջաններից:*

### ԳՅՈՒՄՐԻՆ՝ ԱՊՀ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԱՅՐԱՔԱՂԱՔ

*Հայաստանի վարչապետ Տիգրան Սարգսյանը հունիսի 30-ին մասնակցել է Գյումրիի՝ 2013 թվականին ԱՊՀ մշակութային մայրաքաղաքի կոչմանն արժանանալու կապակցությամբ կազմակերպված տոնական միջոցառմանը: Գյումրիի «Վարդանանց» հրապարակում տեղի է ունեցել տոնական համերգ, որի ընթացքում էլ Գյումրու քաղաքապետ Սամվել Բալասանյանին է հանձնվել «Գյումրին 2013 թվականի ԱՊՀ մշակութային մայրաքաղաք»-ի հավաստագիրը: Ծրագրի շրջանակներում, կանցկացվի 45 միջոցառում: Ծրագրի պաշտոնական փակումը նախատեսված է նոյեմբերի 2-ին:*

*Գյումրին ԱՊՀ մշակութային մայրաքաղաք է հայտարարվել 2012թ. դեկտեմբերի 5-ին Աշխաբադում ԱՊՀ պետությունների ղեկավարների խորհրդի նիստում:*

### ՍԵՐԺ ՍԱՐԳՍՅԱՆԻ ԿՆՔԱՀԱՅՐՈՒԹՅԱՄԲ ԱՄՈՒՍՆԱՑԵԼ Է ԳԱԲՐԻԵԼ ՍԱՐԳՍՅԱՆԸ

*Հուլիսի 2-ին հանրապետության նախագահ Սերժ Սարգսյանի կնքահայրությամբ, Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Տեր Նավասարդ սրբազանը ամուսնացրեց գրոսմայստեր Գաբրիել Սարգսյանին եւ նրա ընտրյալ Լիանա Ավոյանին:*

*Պսակադրության արարողությանը ներկա էին նաեւ ժամանակակից հայ շախմատի մյուս հերոսները, այդ թվում Լեւոն Արոնյանը՝ ֆիլիպինցի իր ընկերուհի Արիաննա Կաոիլիի հետ: Հարսանյաց խնջույքը տեղի ունեցավ «Օջախ» ռեստորանային համալիրում:*

### ՖՐԱՆՍԱՀԱՅ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴԸ ՀՐԱԺԱՐԱԿԱՆ Է ՏՎԵԼ

*Հայ Առաքելական եկեղեցու Ֆրանսիայի թեմի առաջնորդ Նորվան արքեպիսկոպոս Զաքարյանը հրաժարականի դիմում է ներկայացրել Ամենայն Հայոց կաթողիկոս Գարեգին Երկրորդին: Նորվան արքեպիսկոպոս Զաքարյանի դիմումը Սուրբ Էջմիածնին է փոխանցվել հուլիսի 1-ին:*

*Նորվան արքեպիսկոպոս Զաքարյանի մանդատը՝ որպես Ֆրանսիայի թեմի առաջնորդ, լրանալու էր 2014 թվականին:*

*Նորվան սրբազանը Ֆրանսիայի թեմի առաջնորդ է ընտրվել 2007թ., Թեմական ժողովի ժամանակ եւ ծառայում է Փարիզի Սուրբ Հովհաննես Մկրտիչ առաջնորդանիստ եկեղեցում:*

### ՆԱՎԹ ԵՆ ՓՆՏՐՈՒՄ

*Հայաստանում հայտնվել է նավթի եւ գազի հետախուզման երրորդ ընկերությունը՝ «Արմօյլ» ԲԲԸ-ն: Ընկերությունը 2013թ. ապրիլին ստացել է արտոնագիր 1, 3, 5 եւ 6 պայմանական հատվածներում հետախուզման համար: Արտոնագիրը տրվել է ստանդարտ՝ 5 տարի ժամկետով:*

*Հատկանշական է, որ «Blackstalrs Energy Armenia»-ն «Blackstalrs Energy PLC» (ընկերության դուստր ձեռնարկությունը), որի արտոնագրում ամրագրված էին 5 եւ 6 հատվածները, նույնպես պահպանել է արտոնագիրն այդ բլոկների՝ գումարած 4-րդ հատվածի համար:*

CyanMagentaYellowBlack



## ԵԿԵՂԵՑԱԿԱՆ

# ՀՈՒԼԻՍ

*11.07.2013. Եսայի մարգարեի հիշատակության օր*

*13.07.2013. Սուրբ Թադեոս առաքյալի եւ Սուրբ Սանդուխտ կույսի հիշատակության օր*

*20.07.2013. Սուրբ Գրիգոր Լուսավորչի որդիների եւ թոռների՝ Արիստակեսի, Վրթանեսի, Հուսիկի, Գրիգորիսի եւ Դանիելի հիշատակության օր*



*30.07.2013. Սուրբ Վահան Գողթնեցու հիշատակության օր*

## ՈՒԿՐԱԻՆԱՅԻ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՏԵՐՆՈՊՈԼԻ ԱԶԳԱՅԻՆ - ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԵՐԵՎԱՆՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԸ

### Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Մ Է

2013/2014 ուսումնական տարվա ընդունելություն հետեւյալ մասնագիտությունների եւ մասնագիտացումների գծով.

*Մագիստրոսի որակավորմամբ՝*

«Ֆինանսներ եւ վարկ»

«Հաշվառում եւ աուդիտ»

«Համակարգչային համակարգեր եւ ցանցեր»

***Ուսման տեւողությունը՝ 1 տարի - առկա կրթաձեւով:***

***Բակալավրի որակավորմամբ՝***

«Ֆինանսներ եւ վարկ» ***(բանկային գործ)***

«Ֆինանսներ եւ վարկ» ***(մաքսային գործ)***

«Հաշվառում եւ աուդիտ» ***(տնտեսական գործունեության իրավական պաշտպանություն)***

«Համակարգչային համակարգեր եւ ցանցեր»

***Ուսման տեւողությունը՝ 4 տարի - առկա եւ հեռակա կրթաձեւով:***

***Կրտսեր մասնագետ որակավորմամբ՝***

«Հաշվապահական հաշվառում»

«Համակարգչային համակարգեր եւ ցանցեր» մասնագիտություններով, որտեղ ընդունվում են 9-րդ դասարանի ավարտական վկայականով:

***Ուսման տեւողությունը, համապատասխանաբար՝ 2 տարի 10 ամիս եւ 3 տարի 10 ամիս - առկա կրթաձեւով:***

Շրջանավարտները ուսումը կշարունակեն համալսարանի 2-րդ կուրսից, գերազանց առաջադիմություն ցուցաբերածները 3-րդ կուրսից՝ համապատասխան մասնագիտությամբ:

Մասնաճյուղի շրջանավարտներն ստանում են Ուկրաինայի Տերնոպլի ազգային տնտեսագիտական համալսարանի պետական դիպլոմ, որը ճանաչվում է աշխարհի 82 երկրում:

***Տեղեկությունների համար դիմել՝***
***ՀՀ, ք. Երեւան, Ավան, Աճառյան 31***
***հեռ. (+374 10) 61-22-02, 61-30-10, 62-29-69 (Երեւան),***
***5-74-21-31-81 (Թբիլիսի)***
***e-mail: erfiltanx@yahoo.com www.eftneu.am***

## ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԸ ԿԱՐՈՂ ԵՆ ՄԱՍՆԱԿՑԵԼ «ՀԱՅ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ» ՄՐՑՈՒՅԹԻՆ

ՀՀ կրթության եւ գիտության նախարարությունը հայտարարում է, որ ս.թ. օգոստոսի 9-15-ին Հայաստանում, 14-18 տարեկան դպրոցականների համար, կանցկացվի համահայկական ութօրյա 2 միջոցառում՝ Հայագիտական 6-րդ համահայկական օլիմպիադա եւ «Հայ Առաքելական եկեղեցու պատմություն» թեմայով մրցույթ: Վերջինս կազմակերպվում է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Քրիստոնեական դաստիարակության կենտրոնի հետ համատեղ, նրա աջակցությամբ եւ հովանավորությամբ:

Կեցության բոլոր ծախսերը Հայաստանում, ինչպես նաեւ բոլոր շրջայցերի եւ միջոցառումների կազմակերպումը հոգում է հայկական կողմը, մասնակիցները կամ նրանց ուղեկցող կազմակերպությունները հոգում են միայն ճանապարհածախսը:

Խնդրում ենք ներկայացվող տեղեկանքը տրամադրել համայնքային կազմակերպություններին, կրթօջախներին եւ շահագրգիռ անձանց:

Մասնակցության մասին հայտերը պետք է փոխանցել մինչեւ հուլիսի 15-ը: Մանրամասների համար զանգահարել Վրաստանում ՀՀ դեսպանատուն՝ 295-17-23 հեռախոսահամարով:

## ՍՊՈՐՏ ՍՊՈՐՏ

### ՍԵՂԱՆԻ ԹԵՆԻՍ

Վերջերս ացկացվեց սեղանի թենիսի Վրաստանի առաջնությունը, որին մասնակցում էին երկրի 10 քաղաքների եւ շրջանների շուրջ 150 մարզիկներ: Առաջնությունում առանձնապես աչքի ընկան Աջարիայի մարզիկ-մարզուհիները: Մասնավորապես, Աջարիայի կազմում հիանալի խաղով աչքի ընկան Աննա Նիկոյանը, Նարինե Էթարյանը, Վեներա Բարամիձեն, Նոնա Մարգարյանը, Արթուր Կոկոյանը եւ ուրիշներ:

Թբիլիսցիներից աչքի ընկան Դավիթ Ծատուրովը եւ Վիրաբ Ղազարյանը:

### ՇԱԽՄԱՏ. ԱԼԵՔՍԱՆԴՐ ԲԵՆԳԼՅԱՆԻ ՆՈՐ ԲԱՐՁՈՒՆՔԸ



Մենք արդեն գրել ենք, Թբիլիսիի Վարկեթիլիում գտնվող «Սովորող երիտասարդների տան» շախմատի խմբակի սան, Թբիլիսիի թիվ 146 հանրային դպրոցի հինգերորդ դասարանի աշակերտ Ալեքսանդր Բենգլյանի՝ խոստումնալից շախմատիստի ունակություններով օժտված պատանու մասին: Ուրախալի է նշել, որ պատանի շախմատիստը այս անգամ էլ աչքի ընկավ իր հիանալի խաղով: Այս անգամ Ալեքսանդրը, 10 հնարավորից հավաքելով միավորների առավելագույն քանակությունը, դարձավ շախմատի երիտասարդական փառատոնի հաղթող:

Պատանի շախմատիստը արդեն միջազգային մրցաշարերին մասնակցելու հրավերներ է ստացել, սակայն, ինչպես արդեն նշել էինք, նա, միջոցների բացակայության պատճառով, ստիպված է հրաժարվել դրանցից: Թեպետ, փոքրիկ Ալեքսանդրը հույս ունի գտնել հովանավորներ, ովքեր կստանձնեն իր մրցաշարային ֆինանսավորման իրականացումը:

## ՇՈՂԻԿ ԹՈՒԹՈՒՆՋՅԱՆ



Կյանքի 97-րդ տարում վախճանվեց թբիլիսյան հայկական մտավորականության աչքի ընկնող ներկայացուցիչ Շողիկ Թութունջյանը: Մտերիմ ազգականուհին էր հայտնի հասարակական գործիչ, գրականագետ, արժանահիշատակ Հակոբ Չոբանյանի, ով ժամանակին ղեկավարել է Թբիլիսիի թիվ 110 դպրոցը եւ «Մերանի» հրատարակչության հայկական բաժինը:

Շողիկ Թութունջյանը գրեթե 50 տարի զբաղեցրել է պատասխանատու պաշտոններ Վրաստանի ներքին գործերի նախարարությունում՝ զբաղվելով այդ գերատեսչության հարցերով, մեծ հեղինակություն էր վայելում, արժանացել էր ոչ միայն աշխատակիցների, այլեւ բոլոր նրանց սիրուն, ովքեր հաղորդակցվել են նրա հետ: Պարգեւատրվել էր խորհրդային «Պատվո նշան» շքանշանով, մեդալներով:

Շողիկ Թութունջյանի պայծառ հիշատակը հավերժ կմնա՝ որպես բարի մարդկային հարաբերությունների տիպար:

## ԱՆԱԻԴԱ ԱՍԱԹԻԱՆԻ



Վախճանվեց Վրաստանի վաստակավոր մանկավարժ, Վրաստանում առաջին Մանկավարժական գիտելիքների ժողովրդական համալսարանի հիմնադիր եւ նրա առաջին ռեկտոր, Թբիլիսիի Կրծանիսիի շրջանի դպրոցական տեսուչ Անաիդա Յակովլեւի Ասաթիանին:

Ա.Ասաթիանին ծնվել է 1920 թվականի նոյեմբերի 14-ին, բնական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Յակով Ալեքսեյի Էլիբեկյանի ընտանիքում: Ավարտել է Թբիլիսիի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետը՝ «Ռուսաց լեզու եւ գրականություն» մասնագիտությամբ, նաեւ՝ այդ բուհի ասպիրանտուրան:

Ասաթիանին անցել է մեծ ուղի՝ թիվ 30 միջնակարգ ռուսական դպրոցի մանկավարժից մինչեւ Թբիլիսիի ժողովրդական կրթության վարչության տեսուչի պաշտոնը: Դաստիարակել է աշակերտների եւ մանկավարժների, գիտության, կրթության ու մշակույթի ներկայացուցիչների մի քանի սերունդ:

Նրա թոռը՝ Դավիթ Ասաթիանին, այժմ նրա հոգու եւ ամբողջ ընտանիքի առողջության համար աղոթում է Աֆոնի վանքում, ուր Վրաստանի Պատրիարքարանը նրան ուղարկել է ուսման:

***ՄԻ ԽՈՒՄԲ ԱՇԱԿԵՐՏՆԵՐ***



## Խ Ա Չ Բ Ա Ռ

***ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ.*** 9.Հեռախոսի տեսակ: 9.Հերոս «Գիքոր» պատմվածքում՝ ... Արտեմ: 10.Սպորտային մեկնաբան ... Գիլոյան: 11.Նահանգ ԱՄՆ-ում: 12.Իրանական մաքրելու միջոց վաննայի եւ զուգարանակոնքի համար: 14.Հայ ֆիդայի Նիկոլ ...: 16.Գորբաչովյան ...: 18.Երգիչ ... Ասատրյան: 20.Քաջ, արի, անվախ: 21.Թբիլիսիի պետհայդրամայի ներկայացումներից: 25.Շատ-...: 26.Դասարանական, դպրոցական ...: 28.Արեգակնային համակարգի մոլորակ: 29.Որմ, սենյակի նիստերը: 30.Խոսքի մաս: 31.... հարված (ֆուտբոլ): 33.Ոգեւորություն, ստեղծագործական երկունք: 34.... ու մաքուր: 36.Հովիվ, նախորդ: 40.Երկրագնդի մաս: 41.Վնասը հեռացնել, անվնաս դարձնել: 43.Մ.Գորկի՝ «Մակար ...»: 44.Հուլիոս ...: 45.Ոչ պակաս, ավելի: 46.Ջավախեթցի, ժողովրդական երգիչ նախագծի մասնակից ... Հունանյան: 47.Վրաստան՝ լարի, ԱՄՆ՝ ...: 48.Փառասեր, փառքի ձգտող:

***ՈՒՂՂԱՀԱՅԱՑ.*** 1.Էջը գտնելու, նշելու միջոց: 2.Քաղաք Հնդկաստանում: 3.Քիմիական տարր: 4.Զինվորականի կոչում (աստիճան): 5.Հարգանք ու ...: 7.Ստեղծագործություն, ժողովրդական ...: 8.Տրանսպորտի միջոց: 13.Արյան ...: 14.Բրդուճ (բրբ.): 15.Ռեկտորի տեղակալը: 17.Մեղքը չապացուցված մեղադրյալ: 19.«Բախչիսարայի ...ը»: 20.Զրուցակից, խոսողի զույգը: 22.Եռանկյունաչափական ֆունկցիա: 23.Մահակ, չոբանի «զենքը», բիր: 24.Պետություն Ասիայում: 25.Շուշանիկը տանը, ընկերական շրջապատում: 27.Խալ, պեպեն: 31.Կշռի միավոր: 32.Ոչ բնիկ, եկած: 33.Լուսամուտ: 35.Կառքի «վարորդ»: 37.Օգտագործվում է ակնաբույժների կողմից: 38.Նույն ազգից: 39.Թաքուն, գաղտնի որս անող: 41.Նկարչի գործիք: 42.Կիլիկյան թագավոր:

***Կազմեց ԱՆՆԱ ՍԱՐԻԲԵԿՅԱՆԸ***

### ՆԱԽՈՐԴ ՀԱՄԱՐԻ ԽԱՉԲԱՌԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

***ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ.*** 6.Եղյամ: 8.Իկոնա: 10.Ռեալ: 11.Բառ: 13.Փալան: 14.Վարդուհի: 16.Կամո: 17.Սե: 18.Միջուկ: 20.Շիլա: 22.Ռոմ: 23.Սկոտ: 27.Հաբեթ: 29.Խնամի: 32.Պաս: 33.Շեմ: 35.Ատոմ: 36.Ալիկա: 37.Գնաց: 39.Ցեց: 42.Նախշ: 44.Միմինո: 46.Կայմ: 49.Ծիլ: 50.Լալա: 53.Կտուց: 54.Շեղ: 55.Լիմ: 56.Պրուս: 57.Բեմ: 58.ՖԻՖԱ: 59.Նառ: 60.Լավ: 61.Քառ:

***ՈՒՂՂԱՀԱՅԱՑ.*** 1.Ուղղաթիռ: 2.Ամեն: 3.Սիլվա: 4.Մոնրո: 5.Խաբուսիկ: 7.Առաքում: 9.Բռի: 12.Ահել: 15.Ամեոբա: 19.Ջոկատ: 21.Աղ: 24.Կապոց: 25.Տեսակ: 26.Հիմն: 28.Բեկ: 30.Նամե: 31.Մոզ: 33.Շիվա: 34.Մարշ: 38.Անիծ: 40.Ցայտուն: 41.Դիլեմա: 42.Նոլ: 43.Խալիֆա: 45.Միշել: 47.Ակր: 48.Մուսա: 51.Ալիք: 52.Ամառ:

Խմբագիր՝ ՎԱՆ ԲԱՅԲՈՒՐԹՅԱՆ

Մեր հասցեն՝ Թբիլիսի 0105
Գ.Աթոնելի փ. 5 Հեռ. 2990-739, 2990-774
www.vrastan.ge skype: VRASTAN-1920
E-mail: vrastan@caucasus.net

Գրանցման վկայական
№ 4 4 - 1439
«ԿՈԼՈՐ» հրատարակչություն

“ВРАСТАН”
Тбилиси, Грузия
<VRASTAN>
Georgia, Tbilisi
Индекс 66445